Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (5 դասաժամ), ռուսաց լեզվի (5 դասաժամ), անգլերենի (2 դասաժամ), աշխարհագրության (2 դասաժամ), ինֆորմատիկայի (1 դասաժամ), ֆիզիկայի (2 դասաժամ), հայոց պատմության (2 դասաժամ), համաշխարհային պատմության (1 դասաժամ), ՀԵՊ-ի (1 դասաժամ), հասարակագիտության (1 դասաժամ), ֆիզկուլտուրայի (5 դասաժամ), ՆԶՊ-ի (1 դասաժամ), դասվարի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձև 1),
-մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 14-ից մինչև փետրվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 6-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Լիճք, 1-ին փողոց, 2-րդ փակուղի, շենք 3:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 79-27-94, (091) 18-51-36 հեռախոսահամարներով: